

յետագային կը շնորհէին իշխանները իրը ազնւականութեան պատուանուն եւ որոնք ջնջուեցան 1864-ին, ուսմէն Սահմանադրութեամբ:

Իրբեւ սփաթար կը յիշուի Եաչէն Եսայի Դրանխոլեանց: Սփաթարը թիկնապահն էր իշխանին եւ նաեւ երկու մայրաքաղաքներու (Պուքրէշ եւ Եաշ) եւ անոնց բոլոր սահմաններուն սպարապետը: Այս պաշտօնը կը տըրուէր իշխանին մերձաւոր ազգականներուն կամ սիրելիներուն: Պաշտօնը ջնջուած էր վաղուց, բայց տիտղոսը մնաց մինչեւ 1864:

Իրբեւ միտէլնիշէր յիշուած է Եաչէն Գրիգոր Փօփօլիշ: Մէտէշնիշէրը տաճարապետն էր որ պաշտօն ունէր կոչուեցնելու ատեն առնօթ մատուցանելու իշխանին: Այս տիտղոսը կրած են նաեւ Թօտիրաշ Միսիր՝ Ռոմանէն եւ Թ. Միսիր՝ Կալացէն:

Իրբեւ շաքար յիշուած է Եաչէն Ներսէս Պիլատուրեան: Շաթրարը հին ատեն վրանապետն էր իշխանին:

Իրբեւ սէրտար կը յիշուի Եաչէն Սողոմոն Դրանխոլեանց: Սէրտարը գլխաւորն էր երկրորդ կարգի պոյարներուն:

Իրբեւ քալիմար կը յիշատակուի Եաչէն Յակոբ Պըյըզլեան: Պաշտօնն էր մառանապետին, որ կը հսկէր մայրաքաղաքին մէջ վաճառուած գինիին վրայ:

Իրբեւ բիթար յիշատակուած է Եաչէն Լուսիկ Սրմաքաշ: Բիթարը հին ատեն կառապետն էր իշխանին:

Իրբեւ քախարնիֆ կը յիշուի Ռոմանէն Սաչիկ Զէրքէղեան: Բահարնիքը մատուակն էր իշխանին, որ տարուան 4 տօներուն պէսին կը մատուցանէր եկեղեցիին մէջ օրհնուած հացն ու գինին, եւ մեծ կոչուեցնելու ատեն առաջին բաժակը:

Իրբեւ քօմիս յիշուած են Ռոմանէն Սաչիկ Սաչիկեան, Պոթոչանէն Յովհաննէս Յարանեան եւ Եաչէն Սաչիքեան Գարադաշեան: Քօմիսը արտապետն էր իշխանին, եւ վերակացուն դարձի եւ խոտի մթերքներուն:

Իրբեւ քիլնիշէր իշխան կը յիշուի Կարապետ Սաչիկեան, Եաչէն Մասեաց Աղաւնիի զրկուած թղթակցութեան մը (1858, էջ 277) մէջ: Քիլնիշէնը համարակապետն էր, այսինքն՝ ընդհա-

նուր տեսուչ պատերազմական պաշարներու:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԺԹ. դարու կէսէն յետոյ ու մինչեւ մեր օրերը՝ բնիկ հայ տարրը վայելած է տեղացիի մը բոլոր իրաւունքները. ասկէ զատ այդ թըւականէն յետոյ Ռոմանիա գաղթող հայերն ալ վայելած են քաղաքացի դառնալու այն բոլոր դիւրութիւնները՝ զորս երկրին մէջ կրնար վայելիլ որեւէ օտարական:

Իրենց վայելած այս դիւրութիւնները եթէ մասամբ ստիժ դարձան որ աւելի շուտ օտարանան հայերը, — ինչպէս պիտի տեսնենք ուրիշ գլուխի մը մէջ, — անոնք նպաստեցին որ հայերը հասնին պետական բարձրագոյն պաշտօններու ալ, յաճախ դեր կատարելով քաղաքական կեանքի մէջ:

Հայ մըն էր Առաքէ՝ զոր փրոֆ. Եօնկա կը հռչակէ իրբեւ վարիչը մշակութային նոր շարժման Մոլոտովայի մէջ, իրբեւ հիմնադիր թատրոնի, իրբեւ լրագրող եւ իրբեւ բարեկարգիչ ուսմէն վարժարաններու:

Հայ մըն էր Սփիրու Հարէթ՝ որ նախ փրօֆեսօր Պուքրէշի համալսարանին մէջ, յետոյ երկար ատեն կրթական նախարար եղաւ, եւ մեծ ծառայութիւն մատուց երկրին՝ մասնաւորաբար գիւղը օժտելով դպրոցով: Ռոմէն փրօֆեսօր մը, Նիքօլա Շէրպան, կ'ըսէ թէ «Սփիրու Հարէթ կ'ապրի ուսմանացիներու սրտին մէջ իրբեւ ամենամեծ կրթական նախարարը զոր երբեք ունեցած ըլլանք: Կոթողներ եւ բազմաթիւ դպրոցներ որոնք կը կրեն Հարէթի անունը՝ կը հռչակեն ուսմէն ժողովուրդին երախտագիտութիւնը անոր հանդէպ»:

Հայ մըն էր եւ մինչեւ իր վերջին շունչը հայ մնաց Գրիգոր Պըյըզլիու, անդամ վճռաբեկ ատեանի, ու այդ պաշտօնէն առաջ եղած երեսփոխան ու ծերակուտական:

Ուրիշ Պըյըզլիու մը, Քօմիթեա, պետն էր Եաշի ազատականներուն, եւ 1883-ին երեսփոխան ու տարի մը յետոյ ալ փոխ վարչապետ եղաւ:

Փրոֆ. Եօնկա հայոց կողմէ ուսմէն երկրին մատուցուած ծառայութիւնները յիշատակած ատեն կը յիշէ մասնաւորապէս Պըյըզլիու, Միսիր, Կոյալ ընտանիքները, որոնք երկրին տուած են իրաւագէտներ, ուսուցչապետներ եւ